ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 521-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ, 14-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի դեկտեմբերի 6 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով համակարգչում զետեղված թեկնածուների պատահական ընտրության մասին թիվ 1 արձանագրությունը»՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի 2022 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 11:00 -ին թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն որոշման հավելվածի:
2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022 թ. դեկտեմբերի 26
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 522-Ա

ՄԱՐԻԱՄ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի նոյեմբերի 24-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի նոյեմբերի 16-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022YWHF2Y), սեփականատեր Մարիամ Վլադիմիրի Պետրոսյանի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի N 3104 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Շ. Ազնավուրի փողոցի 52 հասցեում գտնվող Մարիամ Վլադիմիրի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0138-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 182,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 8,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով աստիճանահարթակը և 7,1 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան, աստիճանահարթակի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը

կազմում է 452 453,76 (չորս հարյուր հիսուներկու հազար չորս հարյուր հիսուներեք դրամ յոթանասունվեց լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 26

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 523-Ա

ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներ՝ Համլետ Հայկի Մկրտչյանին և Եվա Արամի Ավետիսյանին ցուցաբերել դրամական օգնություն, յուրաքանչյուրին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:

2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 27
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 524-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 49-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 477-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Սեյրան Հովհաննիսյանի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 3942 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 15-ի «Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի արդյունքները հաստատելու մասին» թիվ 49-Ա որոշմամբ Մերձավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից քաղաքացի Սեյրան Սարգսի Հովհաննիսյանին վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով հատկացված 0.113հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը հետ վերցնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի տնօրինության տակ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 15-ի «Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի արդյունքները հաստատելու մասին» թիվ 49-Ա և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի «Հողամասի մի մասը համայնքի տնօրինության տակ հետ վերցնելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 15-ի թիվ 49-Ա որոշման մեջ և դրա հիման վրա կնքված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 477-Ա որոշումները, իսկ Մերձավան գյուղական համայնքի և քաղաքացի Սեյրան Հովհաննիսյանի միջև 2022թվականի ապրիլի 25-ին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը համարել լուծված:
3. Զգուշացնել Սեյրան Հովհաննիսյանին՝ հողամասը վերադարձնել բարեկարգ վիճակում:
4. Ընդունել ի գիտություն, որ

1) սույն որոշմամբ դադարող գույքային իրավունքը ենթակա է պատական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում, համատեղ դիմումի հիման վրա:

2) վարձակալության իրավունքից հրաժարվողն իր միջոցների հաշվին պետք է վճարի սույն որոշմամբ դադարող իրավունքի պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին դիմումատուին առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 26
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 525-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ՀՀ կադաստրի կոմիտեի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի տրված N Կ-19122022-04-0156 գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող Փարաքար գյուղի 04-094-0151-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի այլ նշանակության 24.2 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հող:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 24.2 քառակուսի մետր մակերեսով հողամասը, հանել բնակավայրերի այլ նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռում:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 28
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

OK

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 526-Ա

ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ԱՐՏ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 12-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 4-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022DZUW69), սեփականատեր Արման Սամվելի Գևորգյանի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 3822 դիմումը. ***որոշում եմ***՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Ազնավուրի փողոցի 8 հասցեում գտնվող Արման Սամվելի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0139-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 291,79 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 9,15 քառակուսի մետր արտաքին մակերեսով աստիճանահարթակը, 7,71 քառակուսի մետր արտաքին մակերեսով բաց պատշգամբը և 2,42 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՍՈՒՐԵՆ ՀԱՅԿԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան, աստիճանահարթակի և բաց պատշգամբի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, վճարման ենթակա

ընդհանուր գումարը կազմում է 718 196,23 (յոթ հարյուր տասնութ հազար հարյուր իննսունվեց դրամ քսաներեք լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 28

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 04

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 527-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 20-ին, հողամասի սեփականատեր՝ Գևորգ Դավիթի Ստեփանյանի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գնտվող Գևորգ Դավիթի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0002-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Առանձնացվող հատված 1)՝ 0.04 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան 6-րդ փողոց 3-րդ նրբանցք N 2 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Առանձնացվող հատված 2)՝ 0.0261 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան 6-րդ փողոց 3-րդ նրբանցք N 2/1 հողամաս:

3. Նույն հողատարածքի՝ կողմ 3-ին (Առանձնացվող հատված 3)՝ 0.0262 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան 6-րդ փողոց 3-րդ նրբանցք N 2/2 հողամաս:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի ____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 528-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ OK

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման հատակագիծը տրված 2022 թվականի դեկտեմբերի 21-ին «ԱՐՏԱՍԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից, հողամասի սեփականատեր՝ Արմեն Վարդանի Փահլավունիի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը. ***որոշում եմ***՝

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գնտվող Արմեն Վարդանի Փահլավունիին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0110-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (հիմնական մաս)՝ 0.030265 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Գ. Էմինի փողոց N 10 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Առանձնացվող մաս)՝ 0.029712 հա մակերեսով հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Մուրացանի փողոց N 9 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբեր ___
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 529-Ա

ԽՈՒԴԵՏԱ ՌԶԱԻ ԿՇՏԱԵՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի նոյեմբերի 23-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի նոյեմբերի 8-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022XHZNLS), սեփականատեր Խուդետա Ռզաի Կշտաևի 2022 թվականի նոյեմբերի 28-ի N 3446 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Նարեկացի թաղամասի 5-րդ փողոցի թիվ 14 հասցեում գտնվող Խուդետա Ռզաի Կշտաևին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0009-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 98,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան հիմքը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան հիմքի համար կազմում է 2316 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 227 662,80 (երկու հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր վաթսուներկու դրամ ութանասուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի ___
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 530-Ա

ԼԱԼԱ ԳԵՐԱՍԻՄԻ ԴԱՎԹՅԱՆԻ, ԱՐՄԱՆ ԳԵՂԱՄԻ ՀՈՍՅԱՆԻ, ԱԶՆԻՎ ԳԵՂԱՄԻ ՀՈՍՅԱՆԻ ԵՎ ԱՆԻ ԳԵՂԱՄԻ ՀՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 1-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 6-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022PAQVQB), համասեփականատեր Լալա Գերասիմի Դավթյանի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N 3630 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Արցախ թաղամասի 3-րդ փողոցի 1/1 հասցեում գտնվող Լալա Գերասիմի Դավթյանին, Արման Գեղամի Հոսյանին, Ազնիվ Գեղամի Հոսյանին և Անի Գեղամի Հոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-094-0003-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ,կառուցված 55,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տուն, 13,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով բաց պատշգամբը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԶԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և բաց պատշգամբի համար կազմում է 2316 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 160 498,80 (հարյուր վաթսուն հազար չորս հարյուր իննսունութ դրամ ութանասուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի ___
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 531-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու առաջարկությունը՝ Փարաքար համայնքի 2022 թվականի դրությամբ մարտական գործողությունների ժամանակ վիրավորում ստացած և զոհված զինծառայողների ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու մասին՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի դրությամբ մարտական գործողությունների ժամանակ վիրավորում ստացած և զոհված զինծառայողների ընտանիքներին տրամադրել դրամական աջակցություն 1050000 (մեկ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2022 թ. դեկտեմբերի 30
գ.Փարաքար